ԱՐԻ

ՏԵՂԵԿԱՏՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՌՈՒՄԱՆԻՈՅ ՇՐՋԱՆԻ

"ARI,,
BULLETIN
De
L'UNION ARMENIEN
de
CULTURE PHYSIQUE
et
SCOUTISME

Adresse. Bulv. Carol 27
BUCAREST

ՏԱՐԵԿԱՆ
Ռում. 120 լէյ, Արտ. 20Ֆր.
ՀԱՏԸ 5 ԼԷՅ

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 3 — 15 ՓԵՏՐՈՒԱՐ 1925

ՆՈՐ ՈԳԵՒՈՐՈՒԹԵԱՄԲ

Դադարէ՞ մը յետոյ՝ Հ. Մ. Ը. Մ.ի Ռումանիոյ Շրջանային Վարչութիւնը այսօր կը վերսկսի Արիի հրատարակութեան։

Առանց կսկիծի չէր, Շրջանային Վարչութեան համար, այս կարճատեւ դադարը։ Կարելի՛ չէր արդարեւ կարճ ատենուան մը մէջ Արիի կատարած համեստ բայց ոգեւոր աշխատանքին պարապը տեսնել, ու չցաւիլ անոր հարկադրուած այս ակամայ դադարին համար։ Ու այս դադարը ցաւալի էր մանաւանդ անոր համար՝ որովհետեւ նիւթական դժուարութիւններն էին որ յառաջ կը բերէին զայն։ Ըսենք աւելի պարզ։ Արին պիտի կարենար անվրէպ լոյս տեսնել՝ եթէ Ռումանիոյ եւ արտասահմանի մեր կարգ մը մասնաճիւղերը աւելի բարեխիղճ ըլլային իրենց դրամական առաքումներուն մէջ։

Շրջ. Վարչութիւնը իր անձնական միջոցներէն նոր զոհողութիւն մը կը փորձէ ըսուած համեստ բայց գեղեցիկ գործ մը չձգելու համար կէս ճամբան։ Ու ան այսօր կը վերահրատարակէ Արին։ Այսպէսով նոր փորձ մը եւս կ՚ընէ ան՝ մեր մասնաճիւղերը խղճահարութեան կանչելու համար։ Ու կը յուսայ թէ, այս անգամ, մեր մասնաճիւղերէն ամէն մէկը ճիգ մը աւելի պիտի ընէ ապահովելու համար յարատեւութիւնը Հ. Մ. Ը. Մ.ի անունով լոյս տեսնող մեր միակ տեղեկատուին։

* * *

Արիին վերսկսիլը կը զուգադիպի մեր մասնաճիւղերու գարնանային աշխատանքներուն սկզբնաւորութեան։ Շրջանային Վարչութիւնը գիտէ թէ մեր մասնաճիւղերուն մեծ մասը արդէն կը պատրաստուի նոր ճիգի՝ արդիւնաւոր մարզական տարի մը անցընելու նախանձախնդրութեամբ։ Ան կ՚ուզէ միայն յիշեցնել այսօր թէ մեր մասնաճիւղերը, ու այդ մասնաճիւղերուն ամէն մէկ մարզիկը պէտք է ի մտի ունենան այն ոգին՝ որ Հ.Մ.Ը.Մ.ը կազմեց եւ որով միայն գոյութեան իրաւունք կրնայ ունենալ ան։ Այդ ոգին էր որուն անունով Քոնսթանցա գումարուած մեր վերջին Շրջանային Ժողովը ծրագրեց իր հրահանգները, եւ անոնց գործադրութիւնը պարտադրեց Ռումանիոյ շրջանի մեր մասնաճիւղերուն։ Ուրիշ բան չէ այդ ոգին՝ բայց եթէ Ֆիզիքական կրթութեան հետ միասին ուժ տալ եւ սրտի դաստիարակութեան, մարմնով զբաղած ատեն հոգին չմոռնալ։ Մեր ամէն մէկ մարզիկը պէտք է գիտնայ թէ ուժեղ, առողջ մարմինը ոչ մէկ արժէք ունի՝ եթէ ան սահմանուած չէ կրելու կրթուած հոգի մը, մարդը՝ օժտուած իր պարտքերուն գիտակցութեամբը, ու զանոնք իրականացնելու կամքով։ Մեր կրած նշանակները փցուն առարկաներ են՝ եթէ անոնք չեն՝ խորհրդանիշը մեր ներսի ուխտը, ու անոր հասնելու համար մեր յանձն առած ճիգը։

Հ. Մ. Ը. Մ.ի Ռումանիոյ մարզիկները Քոնսթանցայի բանակումի ատեն

Մարզական նոր տարին սկսելու ատեն մեր շարքերը պէտք է անգամ մըն ալ միտք բերեն երդումը զոր ըրին իրենց հոգին բարձրացնելու, եւ իրենց հետ բարձրացնելու համար նաեւ սերունդը որուն մէջ կ՚ապրին։

* * *

Եւ դարձեալ Արիի վերհրատարակութեան կը զուգադիպի Հ. Մ. Ը. Մ.ի չորս մասնաճիւղերուն մուտքը Ռումէն Մարզական Դաշնակցութեան մէջ։ Այս դէպքը ոչ փառքի առիթ մըն է մեր շարքերուն համար, եւ ոչ ալ պատրուակ մը պէտք է ըլլայ օգտուելու նոյն Դաշնակցութեան ընձեռած առաւելութիւններէն իրեն մաս կազմող մարզիկներուն։ Ո՛չ։ Ընդհակառակը նոր առիթ մըն է աս որպէսզի մեր մասնաճիւ-

գիրն ու մարզիկները քիչ մը աւելի ճիգ ընեն միջազգային շրջանակի մը մէջ արժեցնելու համար իրենք զիրենք, բայց մանաւանդ օտարներուն մօտ, որոնց հետ ասկէ յետոյ շատ առիթներ պիտի ունենան շփուելու, մաքուր ու բարձր պահելու Հ. Մ. Ը. Մ.ի նշանակը։ Ոչ միայն կ'ուզենք որ մեր մասնաճիւղերը յաղթանակներ արձանագրեն օտարներուն հետ իրենց մրցումներուն մէջ, այլ մանաւանդ տիպար հանդիսանան իրենց մարզիկի ոգւոյն ու կարգապահութեամբը։

*
* *

Արիի դաշտի շրջանին զուգադիպեցաւ և մենք առիթը չունեցանք մեր ողջոյնի խօսքը ըսելու կազմակերպութեանը համար քոյր շրջանի մը։ Պուլկարիա եւս ունեցաւ իր Հ. Մ. Ը. Մ.ի շրջանային կազմակերպութիւնը և այդ առթիւ ընտրուած Շրջանային Վարչութիւնը արդէն իսկ ճիգեր կը թափէ կարող աշխատանքի մը լծելու Հ. Մ. Ը. Մ.ի Պուլկարիոյ շրջանի մասնաճիւղերը։ Կը մնայ մաղթել անխոնջ և արդիւնաւոր աշխատանք մեր քոյր շրջանին, որովհետև այս շարժումն է որ պիտի բերէ մեծագոյն բարիքը սերունդին որ կայ ու պիտի գայ։ Հ. Մ. Ը. Մ.ը մեծ դեր ունի կատարելիք Պալքաններու մէջ, ուր համախմբուած է ստուար հայութիւն մը հոգիով և մարմնով այլասերելու տրամադիր։ Հ. Մ. Ը. Մ.ն է որ պիտի արգիլէ այդ այլասերումը։ Եւ սփոփիչ է տեսնել որ Պալքանեան երեք երկիրներ՝ Ռումանիա, Յունաստան ու Պուլկարիա՝ արդէն ունեցան երեքն ալ իրենց Հ. Մ. Ը. Մ.ի շրջանային կազմակերպութիւնները։ Կը սիրենք տեսնել սերտ գործակցութիւն մը այդ երեք շրջաններուն միջև՝ յանուն իրականացման նշանաբաններուն, որոնք ոտքի կեցուցին Հ. Մ. Ը. Մ.ը։

ՍԿԱՈՒՏԻՆ ԵՐԴՈՒՄԸ

Կ'երդնում պատուովս ես Ըլլալ
Հաւատարիմ Աստուծոյս,
Հայրենիքիս ծառայել,
Ուրիշներուն միշտ օգնել
Ըլլալ վեհանձն ու արի
Եւ պարտքերուս գիտակից,
Ու հնազանդ միշտ մնալ
Սկաուտի իմ ուխտիս։

ՍԿԱՈՒՏԻՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Հնազանդ եմ ես, տուած խօսքիս տէր,
Միշտ հաւատարիմ, եղբայր ամէնուն,
Զուարթ ու մաքուր և աշխատասէր,
Խնայող, պաշտպան անասուններուն,
Արի, ուղղամիտ, կայտառ, անձնուէր,
Բարեկիրթ, ու միշտ սիրող հայ լեզուն։

Հ. Մ. Ը. Մ.ը ՌՈՒՄԱՆԻՈՅ ՄԷՋ

ՄԵՐ ԽՂՃԻ ՊԱՐՏՔԸ
ՈՐԲԱՆՈՑԻ ՄԵՐ ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ

Հ. Մ. Ը. Մ.ի Ռումանիոյ Շրջանային Վարչութիւնը վճռած ըլլալով քիչ մը աւելի մօտէն հետաքրքրուիլ Սթրունկայի Ռումանահայ Որբանոցին սաներուն ֆիզիքական և սկաուտական դաստիարակութեամբը՝ սկաուտական շրջանային յանձնախումբի անդամներէն Պ. Յակոբ Պզտիկեանը ղրկեց Սթրունկա, մէկ կողմէ որբանոցի սաներուն ուսուցանելու համար սկաուտական անհրաժեշտ գիտելիքներ, միւս կողմէ Սթրունկայի մէջ կազմուած Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղին աշխատանքներուն մղում տալու համար։

Պ. Պզտիկեան իր վերադարձին, Շրջանային Վարչութեան պարզեց որբանոցին կեանքը և մասնաճիւղին աշխատանքները։ Ազդուած իր պատուիրակին գծած պատկերէն՝ Շրջանային Վարչութիւնը որոշեց անմիջապէս հանգանակութեան մը ձեռնարկել Ռումանահայ փոքրիկներուն մէջ, արդիւնքը յատկացնելու համար Սթրունկայի փոքրիկներուն սկաուտական հանդերձանքին։

Այդ առթիւ Շրջանային Վարչութիւնը շրջաբերական մը ուղղեց մասնաճիւղերուն, որպէսզի դրդիչ մը արթնցնեն ամէն մէկը իր շրջանի պզտիկներուն մէջ՝ իրենց Սթրունկայի որբ եղբայրներուն օգնելու։

Սոյն հանգանակութիւնը որ դեռ լրացած չէ, — մեր մասնաճիւղերէն Քոսթանցա սկաուտ և Սիլիսթրէ աւարտած չըլլալով տակաւին իրենց նախաձեռնած հանգանակութիւնը, — կը խոստանայ տալ բաւարար արդիւնք մը։

Շրջանային Վարչութիւնը որոշած է իր հաւաքած ամբողջ գումարը տրամադրել որբանոցի սկաուտներուն զգեստաւորման։ Կերպասները պիտի գնուին Շրջ. վարչութեան ձեռքով, և կարել պիտի տրուին Պուքրէշի մէջ։ Զատիկին պատուիրակութիւն մը պիտի տանի Սթրունկա կարուած տարազները, և այդ առթիւ տեղի պիտի ունենան Սթրունկայի մասնաճիւղին նորընծաներու քննութիւնը և մասնաճիւղին պաշտօնական բացումը։ Նկատելով որ նոյն օրերուն կը զուգադիպի Ապրիլ Տասնըմէկի սգօրին տասնամեակը, հաւանաբար սգահանդէս մը ևս տեղի ունենայ Սթրունկայի որբանոցի մատրան մէջ՝ որ նուիրուած է Ս. Նահատակաց։ Արարողութեան պիտի նախագահէ Թեմական Առաջնորդը, և հաւանաբար ներկայ ըլլան շատ մը ազգայիններ ալ։

Ստորև կու տանք ցարդ հանգանակուած և Շրջ. Վարչութեան ուղարկուած գումարներուն ցանկը յարակից մանրամասնութիւններով.—

ՊՈՒՔՐԷՇԻ ՄԷՋ

Օր. Ալիս Թաթարեանի և Օր. Աննիկ Մարտիկեանի ձեռամբ	3640
Փոքրիկն Վաչէ Գարագաշեանի ձեռամբ	1500
Զարեհ Բէհեսեանէ	500
Անահիտ Բարակեանէ	500
Տօնախմբութեանց առթիւ սկաուտներու միջոցաւ զանազան ազգայիններէ հաւաքուած	3210
Աթլէթներու ձեռամբ քարթերու վաճառումէն	12

ՊԱԶԱՐՃԸՔԻ ՄԷՋ

Պազարճըքի Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղին կատարած հանգանակութիւնը տուած է հետեւեալ արդիւնքը.—

Երէց անդամներէն	940
Բազմարատ խումբէն	120
Սկաուտներու մէջն	190
Ծախուած քարթերէն	493
Սկաուտներու միջոցաւ	1990
գումար	3733

Գնահատելի եղած են սկաուտներէն Մարտիկ Խաչատուրեանի, Օհաննէս Գալըպօղեանի և եղբայրք Ճէնիվէզեաններու ջանքերը այս հանգանակութեան առթիւ։

ՔՈՍԹԱՆՑԱՅԻ ՄԷՋ

Հ. Մ. Ը. Մ.ի Քոնսթանցայի մասնաճիւղը այդ առթիւ իր ծրագրած հանգանակութիւնը պիտի կատարէ բարեկենդանի շաբթուն։

ՍԻԼԻՍԹՐԷԻ ՄԷՋ

Հ. Մ. Ը. Մ.ի Սիլիսթրէի մասնաճիւղը արդէն իսկ Շրջ. Վարչութեան ղրկած է 445 լէյի գումար մը՝ խոստանալով զայն բարձրացնել բաւարար չափի մը։

ԿԱԼԱՑԻ ՄԷՋ

Հ. Մ. Ը. Մ.ը Կալացի շրջանին մէջ դեռ սկաուտական մասնաճիւղ չունենալով՝ յանձնարարուած է մարմնակրթական շարժման համակիր խումբ մը ազգայիններու, որոնցմէ ոմներուն սկաուտական հանդերձանքին համար հայթայթել անհրաժեշտ կերպասեղէնները։

ՄՈԼՏԱՎԻՈՅ ՄԷՋ

Շրջանային Վարչութիւնը դիմում կատարած է Պաքըու, Եաշ, Ռօման եւլն. որպէսզի հոնկէ ալ հայթայթուին սկաուտական հանդերձանքին անհրաժեշտ մասերը, փողկապ, գօտի, գաւազան, եւլն։

ՌՈՒՄԱՆԻՈՅ ՄԷՋ ՑՐՈՒԱԾ ՈՐԲԵՐԸ

Հ. Մ. Ը. Մ.ի Ռումանիոյ Շրջանային Վարչութիւնը նախանձախնդիր ոչ միայն որբանոցէն ներս զարգացնելու մարզական կեանքը, այլ նաեւ մասնաւորուած որբանոցէն հանուելով զանազան պաշտպաններու կամ փարպեններու քով տրուած որբերու կեանքով, վարելէ յետոյ անհրաժեշտ բանակցութիւնը Ռումանահայ Որբանոցի Կեդր. Վարչութեան հետ՝ որոշեց այդ կարգի որբերը համախմբել Հ. Մ. Ը. Մ.ի տեղական մասնաճիւղերու շարքերուն մէջ, մէկ կողմէ անոնց ֆիզիքական դաստիարակութեան առիթ տալու, և միւս կողմէ զանոնք ազատելու համար վերահաս այլասերումէ մը։

Հայթայթելով ամբողջական ցանկը այդ կարգի որբերուն, որոնց թիւը 55ի կը հասնի՝ Շրջ. Վարչութիւնը զանոնք հաղորդեց Հ. Մ. Ը. Մ.ի տեղական մասնաճիւղերուն, որպէսզի ամէն մէկը հետաքրքրուի իր՝ շրջանին մէջ գտնուած որբերու ճակատագրով։

Ընթացք տալով այդ հրաւէրին՝ Հ. Մ. Ը. Մ.ի Պուքրէշի մասնաճիւղը առաջինը եղաւ որ իր քաղաքին մէջ պաշտպաններու քով տրուած մօտ 35 որբերը Հ. Մ. Ը. Մ.ի դրօշին տակ հաւաքելու ձեռնարկը ըրաւ։ Զանոնք հրաւիրեց փետր. 1ին իր սկաուտներուն հերթական գումարմանը, և տաքուկ մթնոլորտի մը մէջ անոնց բացաւ Հ. Մ. Ը. Մ.ի դռները։ Այս առթիւ ոգեւորիչ ճառեր արտասանեցին Շրջանային վարչութեան ատենապետը, Պուքրէշի մասնաճիւղին ատենապետ Պ. Գէորգ Բէստանեան, և Ռումանահայ որբանոցի տնօրէն Պ. Ս. Սրենց որ այդ պահուն Պուքրէշ կը գտնուէր։

Նորեկները բաժնուեցան խմբակներու մէջ, և արդէն իսկ իրենց առաջին հաւաքական մարզանքը ըրին մասնաճիւղի սկաուտներուն հետ։

Կը սպասուի որ միւս մասնաճիւղերն ալ գլուխ հանեն շուտով Շրջ. Վարչութեան կողմէ իրենց ուղղուած թելադրութիւնը։

Հ. Մ. Ը. Մ.ի ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԸ ՌՈՒՄԷՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Պուքրէշի մէջ նախանցեալ տարի գումարուած Հ. Մ. Ը. Մ.ի Շրջ. ժողովը որոշած էր որ Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերը մտնեն Ռումէն Մարզական Դաշնակցութեան (ֆէտէրացիա) մէջ՝ առանց կորսնցնելու իրենց ինքնուրոյն դիմագիծը։

Շրջանային Վարչութեան բանակցութիւնները Ռումէն Մարզական Դաշնակցութեան հետ աւարտած ըլլալով՝ Հ. Մ. Ը. Մ.ի Պուքրէշի, Քոնսթանցայի, Պազարճըքի և Սիլիսթրէի մասնաճիւղերը յետայսու մաս կը կազմեն Ռումէն Մարզական Դաշնակցութեան, առաջին երեքը իբր երկրորդ կարգի մարզական միութիւն, և վերջինը իբր երրորդ կարգի։

Դիմումները կը շարունակուին վճարելու համար Դաշնակցութեան մէջ մտնող մարզական միութեանց սահմանուած մուտքի գումարը, և ստանալու համար նոյն Դաշնակցութեան անդամատոմսերը՝ Հ. Մ. Ը. Մ.ի անդամներուն անունով։

Հ. Մ. Ը. Մ.ը ՊՈՒՔՐԷՇԻ ՄԷՋ

Մասնաճիւղիս աթլէթիք ճիւղը ներկայ սեզոնի ընդմամբ ու եւ է կարեւոր գործունէութիւն մը չէ ունեցած բացի մէկ քանի ֆութպոլի փորձ—խաղերէ որոնք տեղի ունեցան այս վերջին մէկ երկու շաբթուան ընթացքին։

Ուրախ ենք յայտարարելու թէ, հակառակ արշաւներու, բանակումներու եղանակ չըլլալուն, շնորհիւ սկաուտական խորհուրդի յամառ աշխատութեան այսօր մասնաճիւղիս սկաուտներու թիւը կը հասնի 80ի որոնք կանոնաւոր կերպով ամէն կիրակի կէսօրէ յետոյ Ազգ. վարժարանի սրահին մէջ կը կատարեն իրենց ընդհ. հաւաքումները ու կը ստանան հրահանգներ իրենց առաջնորդներէն ու խմբապետէն, որ միեւնոյն ժամանակ սկաուտական գիտելիքներու մասին կը դասախօսէ անոնց. մէկ քանի անդամներ ալ մասնաճիւղի ատենապետ Պ. Գ. Բէստանեան ներկայ գտնուեցան իրենց հաւաքումներուն և դասախօ-

սեց զանազան բարոյական նիւթերու մասին այնպէս որ ներկայիս մասնաճիւղիս սկաուտները կը սպասեն գարնան գեղեցիկ օրերուն աւելի լաւ կազմակերպուած դուրս գալու, նոր եռանդով և նոր ուժերով: Համոզուած ենք որ մինչև յառաջիկայ ձմեռ մեր սկաուտներուն թիւը պիտի բարձրանայ 100ի:

Հ. Մ. Ը. Մ.ի Ռումանիոյ սկաուտները Քոնսթանցայի բանակումի միջոցին

*** Ինչպէս ամէն տարի այս տարի ևս մասնաճիւղիս սկաուտ և աթլէթ անդամներէն կազմուեցան 4 խումբեր որոնք քաղաքս գտնուող Հայերու տուները պտտելով շնորհաւորեցին Նոր տարին և Ս. Ծնունդը, որու առթիւ տրուած նուէրներու գումարը հասաւ 11797 լէյի:

*** Նոր տարւոյ առթիւ մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպեց տօնածառ մը Ազգ. վարժարանի սրահին մէջ 1 յունվար 1925 կէսօրէ յետոյ ժամը 3ին ուր հրաւիրուած էին Հ. Մ. Ը. Մ.ի անդամները ու համակիրները: Եղան արտասանութիւններ սկաուտներու և օժանդակ անդամներու կողմէ, և սկաուտներու կողմէ ներկայացուեցաւ սկաուտական կեանքէ գրուած «Նոր ընծայ» փոքր թատերախաղը:

*** Յունվար 6ին ալ սկաուտներու նախաձեռնութեամբ ծնողական թէյասեղան մը տեղի ունեցաւ Ազգ. վարժարանի սրահին մէջ, ուր ներկայ էին գրեթէ բոլոր սկաուտներու ծնողքները. հրաւիրուած էին նաև շրջանային վարչութեան անդամները:- Թէյի սպասարկութիւնը կը կատարէին սկաուտները վայրենիններու տարազներ հագած: Տեղի ունեցան երգեր, խմբերգներ բոլոր սկաուտներու կողմէ. հանդէսը տեւեց երեկոյեան մինչև ժամը 7 ու ներկաները մեկնեցան գոհ տպաւորութեան տակ:

*** 18 յունվար 925ի կիրակին կէսօրէ յետոյ վարչութեան կողմէ կազմակերպուած թէյասեղան մը տեղի ունեցաւ Ազգ. վարժարանի մէջ, Հ. Մ. Ը. Մ.ի անդամներու և համակիրներու համար. այս առթիւ հրաւիրուած էին Շրջ. Վարչութեան աթլէթիք և սկաուտական յանձնախումբի անդամներն ալ, որոնք խօսեցան կարևոր նիւթերու շուրջ. բացի ասոնցմէ տեղի ունեցան խաղեր, արտասանութիւններ, որոնցմէ ամենահետաքրքրականը աւետիսի եղող խումբերուն ըրած նկարագրութիւններն էին:

*** 25 Յունվար 925 կիրակի առաւօտ ալ մասնաճիւղի չափահաս տղայոց համար դասախօսութիւն մը կատարուեցաւ Ազգ. վարժարանի սրահը ժամը 11ին. դասախօսն էր Տօքթ. Սալբի. ներկայ էին 30—35 անդամներ:

*** 1924 Նոյ. 9ին, կիրակի օր, եկեղեցւոյ շրջափակին մէջ, Հ. Հ. Ընդհ. Հիւպատոսին, Թեմական Գործ. Մարմնոյ, Ռումանահայ Միութեան, Թաղականութեան, Հողաբարձութեան, Ուսուցչութեան, Հ. Մ. Ը. Մ.ի Շրջանային և տեղական վարչութեան անդամներուն ներկայութեան տեղի ունեցաւ տպաւորիչ հանդէս մը ուր իրենց երդումը ըրին Պուքրէշի սկաուտպետ Գ. Նազաչեան, սկաուտառաջնորդ Յարութիւն Միրիճանեան, և երկրորդ կարգի սկաուտներ Լեոն Պալճեան, Յարութիւն Արղումանեան, Միսաք Երամեան, Եդուարդ Այվազեան, Համազասպ Թումաճանեան, Արամ Էրդեան:

Այս առթիւ խօսեցան Հ. Հ. Հիւպատոսը, Շրջանային Վարչութեան ատենապետ, և մասնաճիւղի ատենապետ պ. Գ. Բէստանեան:

*** Հ.Մ.Ը.Մ.ի Պուքրէշի մասնաճիւղը հակառակ իր բուռն տենչին գէթ ունեցած չըլլալով իրեն համար հաւաքատեղի մը, ստիպուած էր հարևանցի անցընել ձմեռուան շրջանը, գոհանալով մի միայն այն մէկ երկու հաւաքում—դասախօսութիւններով որոնք տեղի ունեցան Նոր տարւոյ առթիւ: Հիմա որ գարնան նախօրեակին ենք՝ յարմար կը տեսնենք մասնաճիւղին անդամներուն ուշադրութեան յանձնել հետևեալ կարևոր պարագաները.—

Ա. Վերջին անգամ Շրջ. Վարչութենէն ստացուած շրջաբերականի մը համաձայն, Ռումէն ֆէտէրասիոնը պաշտօնապէս ճանչցած է Հ. Մ. Ը. Մ.ի Ռումանիոյ բոլոր մասնաճիւղերը: Հետևաբար այն գործօն անդամները որոնք մինչև այսօր չեն յանձնած իրենց լուսանկարները (կէս քարթի մեծութեամբ քաշուած) պարտաւոր են մինչև փետրուար 20, 3ական օրինակ հանել ու յանձնել աթլէթիք խմբապետին, ստանալու համար ֆէտէրասիոնի ինքնութեան տոմսերը:

Բ. Նկատի ունենալով որ այս տարուան Հ. Մ. Ը. Մ.ի Ռումանիոյ շրջանի ընդհ. ոլիմպիականը տեղի պիտի ունենայ յուլիս ամսուան մէջ, ինչպէս նաև Պուքրէշի ոլիմպիականը յունիսին, այժմէն կը յայտարարենք բոլոր աթլէթներուն որ, յետ այսու ամէն կիրակի առաւօտ ներկայ պէտք է ըլլան Y. M. C. A.ի դաշտը կանոնաւոր կերպով կատարելու համար իրենց փորձերն ու յարակից մարզանքները:

Գ. Նախքան սեզոնի բացումը այն անդամները որոնք կը փափաքին մասնաճիւղի ֆութպոլի թիմերուն մաս կազմել կը հրաւիրուին, ըստ նշանատախտակներուն վրայ եղած յայտարարութեանց, ամէն կիրակի կանոնաւորապէս գալ Y. M. C. A.ի դաշտը ու հետևիլ ֆութպոլի փորձերուն, որպէսզի գտնուած ուժերու համաձայն բաժանումներ կատարուին: Կը տեղեկացնենք նաև թէ պիտի ուսուցուին պասկէթպոլի և վօլիպոլի խաղերը ու պիտի կազմուին թիմեր մասնակցելու համար Ռումանական Spiru Haret վարժարանի կողմէ կազմակերպուած մրցումներուն որոնք պիտի սկսին մէկ ամիս յետոյ:

Յ. ԱՊԱՋԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ.ը ԲՕՆՍԹԱՆՑԱՅԻ ՄԷՋ

Սկաուտական շարժումը «Հայկազեան» վարժարանի մէջ օրէ օր կը զարգանայ։ Թաղականութիւնը ու դպրոցի տնօրէնութիւնը ամէն տեսակ աջակցութիւն կ'ընծայեն սկաուտ խմբապետ պ. Վազգէն Մարտիրոսեանին։

Դպրոցի երկսեռ աշակերտութեան համար պարտադիր են մարզանքի և սկաուտական գիտելիքներու դասերն ու կիրակնօրեայ դասախօսութիւնները։ Առայժմ Ն ո ր բ ն ծ ա յ ի քննութիւն տուած ու խմբապետի կողմէ երեք ամիս հրահանգուած են 60 մանչ ու աղջիկ սկաուտներ, որոնք ունին համազգեստ, գեղօրայք, անհրաժեշտ գործիքներ եւայլն։ Վերոյիշեալները Վարդանանց տօնին, երգումի արարողութիւն պիտի կատարեն «Արաքս» սրահին մէջ։ Դպրոցական սկաուտներուն հետ կիրակնօրեայ դասախօսութեանց ներկայ պիտի գտնուին և ամէն կերպ պիտի օգտուին ոչ դպրոցական սկաուտները։

Տեղւոյս Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղի վարչութիւնը կ'ուշադրի չուտով ունենալ իր կանոնագիրը հրապարակը։

*** Փետր. 1ին «Հայկազեան» վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ սկաուտական հերթական դասախօսութիւնը. խօսեցան պ. պ. Օնիկ Սեղբոսեան և սկաուտ խմբապետը։ Նոյն օրը Հ. Մ. Ը. Մ.ի Բ. խումբը 0ի դէմ 3 կօրով յաղթեց պուլկարական «Իզվօր» խումբին։

Հ. Մ. Ը. Մ.ը ՍԻԼԻՍԹՐԻԻ ՄԷՋ

Հ. Մ. Ը. Մ.ի Սիլիսթրէի մասնաճիւղը կազմալուծուած ըլլալով՝ Տրջ. Վարչութիւնը ներկայացուցիչ մը զրկեց Սիլիսթրէ պաշտօն տալով զրաղիլ մասնաճիւղի վերակազմութեամբ։ Տրջ. Վարչութեան պատուիրակին նախաձեռնութեամբ դեկտ. 25ին գումարուեցաւ անդամական ընդհ. ժողով մը, ուր ընտրուեցաւ է մասնաճիւղի նոր վարչութիւն մը հետեւեալ կազմով.— պ. պ. Սարգիս Փափազեան (Ատենապետ), Սարգիս Շէյթոնեան (Ատենադպիր), Դրիգոր Սարգիսեան (Գանձապետ), Կարապետ Յովակիմեան (գոյքապահ), Վահան Կէմիճեան (սկաուտ վարիչ) և Կարապետ Զորբեան (աթլէթիք խմբապետ), Վարչութեան անդամներէն երկուքը իրենց անձնական զրաղումներուն պատճառով հրաժարած ըլլալով վարչութիւնը իրեն անդամակից հրաւիրած է պ. Յարութիւն Դաւիթեանը իբր ատենադպիր և Մատթէոս Արապաճեանը իբր գանձապետ, որոնց պաշտօնը վաւերացուեցաւ Տրջ. Վարչութեան կողմէ։

Հ. Մ. Ը. Մ.ը ՊԱԶԱՐՃԸԲԻ ՄԷՋ

Յունվ. 24ին Ռումանական Ազգ. Տօնին առթիւ տեղի ունեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի Պազարճըքի մասնաճիւղին ցերեկոյթ—հանդէսը, որ բացուեցաւ «Մեր Հայրենիք»ով։

Տեղի ունեցան երգեր և արտասանութիւններ, և ներկայացուեցաւ «Թիապարտ» բիէսը։

Հ. Մ. Ը. Մ.ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Թէև քիչ մը ուշ՝ սակայն հաճոյքով կու տանք ստորև քանի մը նօթեր Հ. Մ. Ը. Մ.ի Պուլկարիոյ շրջանի պատգամաւորական ժողովին մասին, որ հիմը կրաւ շրջանային կազմակերպութեան մը Պուլկարիոյ մէջ.—

Հոկտ. 26ին, կիրակի օր տեղի ունեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի Պուլկարիոյ շրջանի պատգամաւորական ժողովը, Ֆիլիպէի Ազգ. խորհրդարանի դահլիճին մէջ։

Ներկայ էին պատգամաւորներ հետեւեալ շրջաններէն.—

Սոֆիա, Վառնա, Թուսմուբ, Ֆիլիպէ, Սլիվէն, Թաթար Փազարճըք, Պուրկազ, Սթ. Զակօրա։

Համագումարը բացուեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի Ֆիլիպէի մասնաճիւղին կողմէ, որ նախաձեռնարկ եղած էր սոյն համագումարին։

Նախագահ ընտրուեցաւ պ. Կարօ Ղազարոսեան, և քարտուղար պ. պ. Հայկունի Քիրիշեան և Թորգոմ Հէքիմեան։

Կարդացուեցան շրջաններու ղրկուած հեռագիրները։

Պատգամաւորական լիազօրագրերու ստուգումէն յետոյ, ամէն մէկ պատգամաւոր զեկուցումը ըրաւ իր շրջանի մասնաճիւղի բարոյական և նիւթական գործունէութեան։

Բերուած տեղեկութիւններէն երեւան կու գար որ Հ. Մ. Ը. Մ.ի Պուլկարիոյ շրջանի մասնաճիւղերը (որուն մէջ չեն հաշուուած դեռ Շումէնը և Հասքովոն) հաւաքարար կը համրեն վեց հարիւր մարզիկ և սկաուտ անդամներ։

Ամէն մէկ շրջան իր կազմութենէն մինչև այսօր գործած է բոլորովին առանձին և սեփական միջոցներով և միայն վերջերս է որ անոնք կրցած են փոխադարձ գրաւոր կապ հաստատել։

Բաւական գոհացուցիչ համարուեցան Սոֆիայի, Վառնայի, Սլիվէնի և Ֆիլիպէի մասնաճիւղերու գործունէութիւնը։ Այս առթիւ պէտք է յիշել որ Ֆիլիպէն, վերջին օրերը նոր յաջողութիւն մը ձեռք բերած էր, տեղւոյն մէջ չորս տարիէ ի վեր գոյութիւն ունեցող և աչքառու կեանք մը ստեղծող «Շ ա ն թ» մարմ. միութեան Հ. Մ. Ը. Մ.ի հետ վերջնականօրէն միացումով։

Զեկուցումներու աւարտումէն և տեղեկաբերութեանց շուրջ գիւանին ներկայացուցած բանաձեւին քննարկումէն յետոյ համագումարը անցաւ Հ. Մ. Ը. Մ.ի ծրագիր—կանոնագրի ընթերցման։

Նախագահը յիշեցուց որ, ինչպէս ուրիշ ո և է շրջան, Պուլկարիոյ պատգամաւորական ժողովն ալ իրաւասու չէ ո և է հիմնական փոփոխութիւն կատարելու Հ. Մ. Ը. Մ.ի ծրագիր—կանոնագրին մէջ, և աւելցուց թէ ներկայ համագումարը նկատի պիտի առնէ ընդհ. ծրագիր—կանոնագրի այն կէտերը, որոնք անհրաժեշտօրէն պզտիկ փոփոխութիւններու կը կարօտին պատշաճեցնելու համար Պուլկարիոյ պետական օրէնքներու ոգիին, ինչպէս նաև այն կէտերը՝ որոնք պատգամաւորական ժողովը անգոհացուցիչ կամ փոփո-

խութեան կարօտ կը գտնայ և կ'ուզէ Հ. Մ. Ը. Մ.ի յառաջիկայ պատգամաւորական ժողովին ուշադրութեան յանձնել։

Կանոնագրի ընթերցման ատենը եղան զանազան թերագրանքներ, դիտել տրուեցան կէտեր, որոնք այս օրուայ պայմաններուն չեն համապատասխաններ, և գրեթէ ամէն մէկ հատուածի շուրջ կատարուեցան թեր ու դէմ վիճաբանութիւններ։

Յաջորդաբար պատգ. ժողովը զբաղեցաւ օրակարգի միւս խնդիրներով։

Ընդհ. բաղձանք մըն էր նոյնպէս Հ.Մ. Ը. Մ.ի Պուլկարիոյ շրջանի օրկանի մը գոյութիւնը։ Այս խնդիրը սակայն ներկայիս դժուարութիւններ ունենալուն, պատգ. ժողովը որոշում մը քննարկեց, որու համաձայն Շրջ. Վարչութիւնը անմիջապէս որ մասնաճիւղերու տարրական միութիւնը լրանայ կը ձեռնարկէ Հ. Մ. Ը. Մ.ի օրկանի մը հրատարակութեան «Մարդիկ» անուանով, որ կ'ուղղուի Պուլկարիոյ Հ. Մ.Ը. Մ.ի, ընդհանուր հայ մարդական կեանքի, Պուլկարիոյ միջազգային մարդական աշխատանքներու և համաշխարհային մարմնակրթական և սպառատական դիրաւոր երևոյթներու բաժինը։

Համագումարը որոշեց նաև կատարել յառաջիկայ դարձան Պուլկարահայ ընդհ. ողիմպիական մը, որոնց տեղը և թուականը կ'որոշէ Շրջանային Վարչութիւնը։

Համագումարը յետոյ անցաւ Շրջանային Վարթեան և Հ. Մ. Ը. Մ.ի ընդհ. պատ. ժողովի Պուլկարիոյ շրջանի երկու պատգամաւորներու ընտրութեան։

Ընտրուեցան Շրջանային Վարչութեան անդամներ.

Պ. Պ. Տօքթ. Թոմմասեան՝ ատենապետ, կարօ Դաղարոսեան՝ ատենադպիր, Մինաս Միքայէլեան՝ գանձապահ, Թադեոս Թադեոսեան, կարապետ Ղ. Փաղեան, Ներսէս Աստուածատուրեան, Հայկունի Քիրիշեան։

Իսկ պատգամաւորներ.— պ. պ. Լեւոն Դաղանճեան և Մ. Աստարճեան։

Պ. կարօ պարզելէ յետոյ թէ անհրաժեշտ է, մեր շրջաններուն կազմակերպութիւնէն յետոյ, ստեղծել նաև բոլոր շրջաններու միջև ընդհանուր կապ և Հ. Մ. Ը. Մ.ի կենդրոնական մարմին մը, առաջարկեց որ Պուլկարիոյ շրջանը մանաւանդ քոյր շրջաններու հետ նախաձեռնարկ ըլլայ Հ. Մ. Ը. Մ.ի ընդհ պատգամաւորական ժողովի մը գումարման, որ միաձայնութեամբ քուէարկուեցաւ։

Հ. Մ. Ը. Մը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Ամերիկայի Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւնը հիմնուած է 1921 փետրվ. 7ին, Նիւ Եորքի մէջ, Պոսէն եկած քանի մը երիտասարդներու կողմէ, հետևողութեամբ Պոսոյ Հ. Մ. Ը. Մ.ի ծրագրին և նպատակին՝ որ է

Ֆիզիքական դաստիարակութեան միջոցով հայ ցեղի աղնուացման ատաղել, նոր սերունդին ներշնչել ոյժի ու գեղեցկի ճաշակը և անոր մէջ մշակել ձեռներէցութեան, փոխադարձ օգնութեան ու մարդուր ընկերական յարաբերութեան ոգին։

Խոչոր ձեռնարկ՝ նոյնքան խոչոր այս գաղութին համար։

Առաջին օրերու անխուսափելի դժուարութիւններէն ետք սակայն Միութիւնը շուտով շրջապատուեցաւ նոր սերնդի կենսունակ ներկայացուցիչներով, ստանալով կանոնաւոր կազմակերպութեան մը ձևը։ Իր դիմումին վրայ Պոսոյ Ընդհ. կեդր. Վարչութենէն վաւերացուեցաւ, իբրև Հ. Մ. Ը. Մ.ի 80րդ. մասնաճիւղ և, միևնոյն ատեն, Ամերիկայի շրջանի կեդր. վարչութիւն։

Իբրև այդ ձեռնարկեց գործի, իր լիազօր պատուիրակը ուղարկեց անմիջապէս մօտիկ քաղաքները և մասնաճիւղեր կազմեց նոյն տեղերուն մէջ, ինչպէս Ֆիլատէլֆիա, Պոսթըն, Հարթֆըրթ և Փրավիդէնս։

Ցաւալի է արձանագրել, սակայն, որ զանազան պատճառներ միչտ արգելք եղած են, որ այս մասնաճիւղերը ունենան կանոնաւոր կեանք ու գործունէութիւն։ Համեմատական լաւագոյնը Ֆիլատէլֆիան է, ուր նման միութիւն գոյութիւն ունեցած էր արդէն առաջուց ալ։ Այս փաստը, սակայն յուսահատեցուցիչ չէ. ամէն հաւանականութիւն կայ, որ նոր ջանքերով և կիրարկուած նպատակայարմար միջոցներով՝ ոչ միայն ատոնք վերակազմուին, այլ և կազմուին նոր ճիւղեր։

Շարժումին առանցքը կը մնայ Նիւ Եորք, ուր Միութիւնը կը հաշուէ 80է աւելի անդամներ։

Մարզական կեանքը, Հ. Մ. Ը. Մ.ի ընդհ. ծրագրին համաձայն, բաժնուած է չորս գլխաւոր մասերու Ա. Ս կ ա ո ւ տ ա կ ա ն, Բ. Շ ո ւ է տ ա կ ա ն մ ա ր զ ա ն ք ն ե ր, Գ. Դ ա շ տ ա յ ի ն խ ա ղ ե ր, Դ.Դ ա շ տ ա յ ի ն մ ա ր զ ա ն ք ն ե ր։

Ա.Սկաուտական ճիւղը գրեթէ գոյութիւն չունի, տեղական պայմաններու հարկադրութեամբ, թէպէտ ճիղեր կ'ըլլան։

Բ. Շուէտական մարզանքներու կանոնաւոր դասընթացք մը կ'անցնի, ամէն տարի չարաթական որոշ օրեր, միութեան իրբև մարզարան ծառայող 27րդ փոզոյի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցիի սրահին մէջ։

Գ. Դաշտային խաղերու մէջ, գլխաւորաբար այժ է տրուած ֆութպոլին (Soccer)։ Արդէն երկու խումբեր գոյութիւն ունին. ատոնց առաջինը, որ կը մասնակցի Նիւ Եորքի Մէթրոփոլիթըն Լիկի Բ. բաժանմունքին, անցեալ տարի, 8 տարբեր ազգերու մէջ Բ. մրցանակ շահեցաւ։ Այս տարի դաշտային խաղերու ցանկին վրայ կարելի եղաւ աւելցնել նոյնպէս Լ ո ն Թ է ն ի զ ը, որ կանոնաւոր ու բեղուն շրջանէ մը ետք՝ ունեցաւ իր ախոյեանութեան մրցումները։

Դ. Դաշտային մարզանքներու մէջ՝ Միութեան տարբեր բերող արդիւնքներ ստացուած են, անցեալ և այս տարուայ Ամերիկահայ Ողիմպիական մրցումներուն մէջ, որոնց նախաձեռնողը ու կազմակերպողը եղած է Հ. Մ. Ը. Մ.ի Ամերիկայի կեդրոնը։ Այս ողիմպիականները պիտի ջանանք որ տարին մէջ անգամ կանոնաւոր ունենանք։

Միութիւնը ունի նաև իր ամառնային բանակումները, երկու շաբաթը անգամ մը, կանոնաւորաբար, ուր կարող առաջնորդի մը հսկողութեան տակ փափաքող անդամները առիթը կ'ունենան բնութեան մաքրութիւնը վայելելու։ Ընկերական կեանքը հաճելի է միութենէն ներս։ Անդամները մէկ ընտանիքի զաւակներու պէս կը վերաբերուին իրարու։

Միութիւնը իր լայն ծրագրին միայն չնչին մէկ մասը կարող է գործադրել առայժմ, այն ալ շատ դժուարաւ, որովհետև իր նիւթական միջոցները չափազանց անձուկ են։ Միշտ անդամներու զոհողութիւններով կը գոցուին իր բացերը։ Անհրաժեշտ է ունենալ կոկիկ դաշտ մը ու փոքրիկ մարզարան մը։ «Ամերիկահայ Հանրագիտակ Տարեգիրք»

ՏԻԳՐԱՆ ԽՈՅԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ.ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Փարիզի Հ. Մ. Ը. Մ.ի ֆութպոլի խումբը վերջին քանի մը ամսուան ընթացքին փայլուն գործունէութիւն մը ունեցաւ։ Ստորև կուտանք արդիւնքը իր կատարած մրցումներուն մէկ մասին՝ յաջորդ թիւի մը ձգելով տալ շարունակութիւնը.—

1. Հ.Մ.Ը.Մ.ը բացաւ 1925ի սեզոնը, իր պահեստի խումբինև Y. A. St. Ouen (Սէնթ Ուէն) խմբին դէմ մրցումով մը, որ տեղի ունեցաւ Օգոստ. 31ին, Սէնթ Ուէնի սթատին մէջ։ Սոյն մրցումը բաւական կարևոր էր նկատի ունենալով հակառակորդին ոյժը որ ախոյեանն էր Փարիզի Առիւծներու խմբին։ Երկու խումբերն ալ հանդարտ խաղ մը ունեցան, անձրևին տակ. Սէնթ Ուէն առաջինը եղաւ ձգելու գնդակը մեր ցանցին մէջ. հ ա փ թ ա յ մ է ն վերջ հայերը կը սպառնային հակառակորդ «կոլ»երուն, երբ գեղեցիկ շատ մը բաներէ վերջ յաջողեցան կոլ մը ընել. խաղի մնացորդ ժամուն գնդակը չէր անցներ մեր կողմը, երբ խաղին վերջը սուլեց դատաւորը։ Լրացաւ match—nul՝ այսինքն 1ի դէմ 1 կոլով։

2. Թէպէտ 7 սեպտ.ի համար մրցում մը կնքուած էր **Puteaux** գիւղի Ա. խումբի դէմ, մրցումը տեղի չունեցաւ **Puteaux**ի վարչութիւնը չկրնալով պահել իր խոստումը։

3. Կիրակի 14 սեպտ. **Neuilly** (Նէօյլի) գիւղի Ա. խումբին դէմ մրցեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի խումբը, և յաղթեց անոր 0ի դէմ 5 կոլով։

Ֆրանսացիք շատ վէճեր յարուցին, նոյնիսկ սպառնացան խաղը ձգել, բայց հայ խաղացողները ցուցուցին ամենամեծ պաղարիւնութիւնը ու սբորի ոգին, նոյն իսկ 2 կոլ նուիրելով անոնց։

4. Սեպտ. 21ին Հ. Մ. Ը. Մ.ի խումբը մրցեցաւ Վէրսայլի մէջ, տեղական խումբին դէմ որ յաղթած էր **Paris—Star** զօրաւոր խումբին պահեստին։ Սոյն խաղը շատ կարևոր էր. աւաղ որ կիսկատար մնաց տեղատարափին սաստկանալուն պատճառաւ։

Խաղը սկսաւ Վէրսայլի յարձակողականովը, և հինգ վայրկեան չանցած Հ. Մ. Ը. Մ.ը կը կորսնցնէր Ա. կոլը, իր խաղացողներէն մէկուն սխալին հետևանքով. քիչ յետոյ նոյն խաղացողին ուրիշ մէկ սխալով Հ. Մ. Ը. Մ.ը կը կորսնցնէր երկրորդ կոլ մը. բայց հայ տղաքը, փոխանակ յուսահատելու, անցան յարձակողականի և յաջողեցան կոլ մը որուն փոխադարձեց Վէրսայլ, և «հաֆթայմ»ը վերջացաւ Վէրսայլ 3, Հ. Մ. Ը. Մ. 1 կոլով։

Յաջորդ կիսուն Հ. Մ. Ը. Մ.ը միշտ կը սպառնար Վէրսայլի, և քիչ չանցած կոլ մը կ'անցընէր. նոյն պահուն անձրևը որ չէր դադրած բոլոր խաղի ընթացքին, սաստկացաւ, և Ֆրանսացւոց դիմումին վրայ դատաւորը կեցուց խաղը լրումէն 35 վայրկեան առաջ առանց արդիւնքի։

Հ. Մ. Ը. Մ.ի ֆութպոլի յանձնախումբը դիմեց Վէրսայլի փոխ վրէժ մրցման մը համար։

5. Սեպտ. 28, **Stade de Colombes**ի մէջ տեղի կ'ունենար շատ կարևոր մրցում մը Հ. Մ. Ը. Մ.ի Ա. և Ռասինկ գլիւպ տը Ֆրանսի (**HC**) խումբերուն միջև։ Սոյն մրցումին կարևորութիւնը չեշտելու համար չեմ զգար ամէն ոք իմացած ըլլալով Ռասինկ գլիւպի անունն ու համբաւը։

Մրցումը սկսաւ Ռասինկի յարձակմամբը, որ կրակոտ բաներէ վերջ կրցաւ մտցնել Ա. կոլը։ Հ.Մ. Ը.Մ.ը ջարդես կատղած ստացած կոլէն, կը յարձակէր անխնայ կազմելով վայրէջքներ գեղեցիկ կարուկ «բասս»երով և գեղեցիկ համընթացութիւններով յաջողեցաւ իր առաջին կոլը։

Առաջին մասին մնացորդը գնդակը կը խաղար Ռասինկի կոլին առջև վայրկեանէ վայրկեան Հ. Մ. Ը. Մ. կը սպառնար իր երկրորդ կոլը, երբ հաֆթայմը սուլեց։

Երկրորդ կէսին Հ. Մ. Ը. Մ.ը վերսկսաւ յարձակողականի, և քանի մը վայրկեան չանցած յաջողեցաւ մտցնել երկրորդ կոլը, խլելով ծափահարութիւններ։

Այս կոլ—էն վերջ երկու կողմերն ալ սաստկացուցին յարձակումը, և գնդակը պահ մը Ռասինկի, պահ մը Հ. Մ. Ը. Մ.ի կոլերուն առջև կը խաղար, և այսպէսով խաղը վերջացաւ Հ. Մ. Ը. Մ.ի յաղթանակով 2ի դէմ 1 կոլով։

Վերադարձը շատ խանդավառ անցաւ, երգերով ու զուարճալիքով և տղաքը—խաղացող և հանդիսատես բազմութեան հանգիստ սրտով, գոհ փրկած ըլլալուն Հ. Մ. Ը. Մ.ի պատիւը, և բարձրացուցած ըլլալով մի անգամ ևս անոր դրօշը յաղթականի կայմին վրայ։

6. Հոկտ. 5ին Հ. Մ. Ը. Մ.ի երկրորդ խումբը մրցեցաւ Chantierի 2րդ խումբին դէմ և յաղթեց 0ի դէմ 6 կոլով. նշանակելի էր մեր փոքր տղոց արագաշարժութիւնն ու գեղեցիկ բաները։

Նոյն օրը Հ. Մ. Ը. Մ.ի Ա. խումբը հանգիստ ըրած էր։

7. Կիրակի 12 հոկտ. ժամը 3ին, Villejuif (Վիլժուիֆ)ի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի Ա. խումբը յաղթեց Վիլժուիֆի Ա. խումբին (որ Ա. բաժանումէն կը խաղայ) 2ի դէմ 1 կոլով։ Սոյն խաղը շատ վայրագ եղաւ, Ֆրանսացիք շատ հուժկու և քիչ մը կոշտ ըլլալով խաղի մէջ։

8. Նոյն օրը Հ. Մ. Ը. Մ.ի երկրորդ խումբը յաղթեց Gagny (Կանյի)ի երկրորդ խումբին 3ի դէմ 0 կոլով։

9. Հ. Մ. Ը. Մ.ի Ա. խումբը հոկտ. 19ին մրցեցաւ Chartresի մէջ տեղւոյն Ա. խումբին դէմ, և հոծ բազմութեան մը ներկայութեան յաղթեց անոր 3ի դէմ 2 կոլով։

Սոյն մրցումը չատ կարևոր էր, նկատի ունենալով հակառակորդներուն Ֆրանսայի "Լիկ տը Սանթրը»ին մէջ դրաւած Բ. դիրքը։

Խաղը սկսաւ Հ. Մ. Ը. Մ.ի յարձակումովը։ Հայ տղոց բասերը կտրուկ և արագ—չատ մեծ տպաւորութիւն թողուցին հանդիսատեսներուն վրայ, որոնք լրիվ մնջիկ հետաքրքրութեամբ և մեծ հիացումով կը հետևէին խաղին բոլոր փուլերուն։ Հ. Մ. Ը. Մ.ը գեղեցիկ վայրէջքով մը յաջողեցաւ—չնորհիւ իր արագութեան—ձգել հակառակորդ կոլին մէջ առաջին կոլը, որ չատ ծափահարուեցաւ. պարտինք ըսել թէ Ֆրանսացիք թէպէտ հակայ և հուժկու, չատ քաղաքավար ընթացք մը ունեցան խաղի միջոցին. խաղցան առանց աղմկելու։ Քիչ չանցած Հ.Մ. Ը. Մ.ը կ'անցընէր իր երկրորդ կոլը—իկելով ծափահարութիւններ և քաջալերանքներ ամէն կողմէ։

Ֆրանսացիք ալ իրենց կոյմէ սկսան յարձակիլ և յաջողեցան կէս ժամուայ ընթացքին անցընել երկու կոլեր։ Բայց ասոնց կրցաւ փոխադարձել Հ. Մ. Ը. Մ.ը կոլով մը, և այսպէսով խաղը վերջացաւ Հ. Մ. Ը. Մ.ի յաղթանակով 3ի դէմ 2 կոլով— ընդհանուր խանդավառութեան մէջ։

Ժողովրդեան և խաղացողներու սրտի ողին ամէն դնահատումէ վեր էր ինչպէս նաև Ֆրանսայի դասաւորին անկողմնակալութիւնը։

Խաղի վերջը Ֆրանսայի խմբապետը եկաւ չնորհաւորել մեր յաղթանակը, և չնորհակալութիւն յայտնեց սա բառերով.— «Այսօր ֆութպոլի գեղեցիկ դաս մը տուիք մեզի որուն համար չատ չնորհակալ ենք»։ Իսկ մեր խմբապետը պատասխանեց.— «Բնաւ չպիտի մոռնանք Chartres"քաղաքի մեզ ըրած ընդունելութիւնը և իր բնակիչներուն sportif ոգին, որուն համար կը խնդրենք որ հրապարակաւ մեր կողմէ չնորհակալութիւն յայտնէք»։

Հ.Մ.Ը.Մ.ի խումբը կը կազմէին.—(կոլ) Տէվէճեան, (պէքեր) Ռ. Շահմիրեան, Մ. Մկրտիչեան, (հաֆեր) Քանթարճեան, Ս. Կարապետեան, և Ա. Պաղտասարեան, (ֆորվըրտներ) Մ. Ասատուրեան, Կ. Արծիւեան, Հ. Հուպիսեան և Ս. Խուպէսէրեան։

10. Նոյն օրը Հ.Մ.Ը.Մ.ի Բ.խումբը յաղթեց Montgeronի(Մոնժըրոն) Ա. խումբին 2ի դէմ 1 կոլով. նշանակելի են մեր երիտասարդ խաղցողներուն կորուկ բասերը, արագութիւնն ու տիսիպլինը։ ՀԱՅԿ

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Իր նախորդ թիւով՝ Ա ր ի ն արձագանգ եկաւ զանազան չրջաններու մէջ տեղի ունեցած Ողիմպիական խաղերուն։ Իր դաղարի միջոցին էր որ Պոլսոյ հայ մարզիկներն ալ իրենց մարզահանդէսը ունեցան։ Ա ր ի ն չէր կրնար, թէև քիչ մը ուշ, չտալայդ մրցումներուն արդիւնքը.—

Հետաքրքիրներու և քաջալերողներու սուսուր բազմութեան մը ներկայութեան է որ, հոկտ. 19ին, ուրբաթ օր կէսօրէ վերջ տեղի ունեցած է այդ մարզահանդէսը։ Վաթսունէ՝ աւելի մարզիկներ—որոնցմէ չատեր անծանօթ մինչև երէկ— եկած էին իրենց մասնակցութիւնը բերելու և ջանալու իրենց համեստ ջանքերովը խլել առաջնութիւնը, կատարուած զանազան մրցումներուն մէջ։ Շատ կանոնաւոր կերպով է որ տեղի կ'ունենան մրցումները, որոնց արդիւնքները կ'ըլլայ.—

100 մէթր.— Ա. Հր. Աճէմեան, Բ. Էրմասեան, Գ. Մր. Կուսուզեան։ Մրցանիշ 12 երկվ.

200 մէթր.— Ա. Հր. Աճէմեան, Բ. Մր. Կուսուզեան Գ. Միք. Տիւրկէրեան։ Մրցանիշ 25 երկվ.

400 մէթր.— Ա. Հր. Աճէմեան, Բ. Միք. Տիւրկէրեան, Գ. Մր. Կուսուզեան,։ Մրցանիշ $57^2/_5$ երկվ.

800 մէթր.— Ա. Թորոսմ Սէթեան, Բ. Գէորգ Նալպանդեան, Գ. Կր. Մարտիրոսեան։ Մրցանիշ 2 վրկ. 25 երկվ.

1500 մէթր.— Ա. Խաչ. Պէնկլեան, Բ. Մատաթ Քասպարաճեան, Գ. Լեոն Մուրատեան։ Մրցանիշ 5 վրկ. $1\ ^2/_5$ երկվ.

Մէկ քայլ.— Ա. Զարեհ Եավրուեան, Բ. Էրմաս. Գ. Կր. Քիւրքճեան։ Մրցանիշ 5 մէթր 31։

Երեք քայլ.— Ա. Հր. Աճէմեան, Բ. Զարեհ Եավրուեան, Գ. Էրմասեան։ Մրցանիշ 11 մէթր $60^1/_2$

Բարձրութիւն.— Ա. Զր. Եավրուեան, Բ. Հր. Աճէմեան, Գ. Պղ. Խանճեան։ Մրցանիշ 1 մէթր 58։

Կեցած երկայն.— Ա. Զր. Եավրուեան, Բ. Հրանդ Աճէմեան, Գ. Էրմասեան,։ Մրցանիշ 2 մէթր $61^1/_5$։

Ջողով բարձր.— Ա. Ա.ս. Տիրատուրեան, Գեղամ Եասեան, Գ. Թաթուլ Փալուեան։ Մրցանիշ 2 մէթր 44։

Երկաթ նետել.—Ա.Սէմէրճեան, Բ.Կր. Քիւրքճեան, Գ. Էրմասեան։ Մրցանիշ 8 մէթր 57։

Դրօշարշաւ (4×100).— Մ. Պէշիկթաշ (Աճէմեան Եավրուեան, Սէթեան, և Վ.Ղ. Միսկճեան, Բ. Շիշլի, Գ Սամաթիա։ Մրցանիշ 54 երկվ.

Օրուան յաղթականը կ'ըլլայ Հր. Աճէմեան չորս առաջնութիւն և երկու երկրորդութիւն չահած ըլլալով։

Կատարուած խաղերուն արդիւնքներէն մեծ մասը զգալիօրէն աւելի են Եւրոպայի զանազան մասերուն Հայ մարզիկներու կողմէ կատարուած նմանօրինակ խաղերու ընթացքին ձեռք բերուած արդիւնքներէն

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Ա ր ի ի դաղտրման առնն դիզուած չատ մը նիւթեր՝ որոնք կապ ունէին Հ. Մ.Ը. Մ.ի կեանքին՝ սոխպուած ըլլալով տալ սոյն թիւով, յաջորդ թիւի մը կը ձգենք մեր տրամադրութեան տակ գտնուած չարք մը յօդուածներ։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Մեր գործակալներն են

Պուքրէշի համար Պ. Գրիգոր Թաչճեան (Str. Ghiocei 8)։

Քոնսթանցայի համար Պ. Օննիկ Սեղբոսեան։

Սիլիսթրէի համար Պ. Վահան Կէմիճեան

Պաղտրճքի համար Պ.Ա. Ադամեան

Որոնց կարելի է դիմել«Արի»ի բաժանորդագրուելու համար։

ՕՐ. ՄԱՔՐՈՒՀԻ ԹԱԴԷՈՍԵԱՆ

և

Պ. ԿԱՐԱՊԵՏ ԲՕԼԱՏԵԱՆ

Նշանուած

Պուքրէշ 1 Փետրուար 1925

Տպ. «ՄԱՄԻՍ» „CARTEA ROMANEASCA"